



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 1346
Ապրիլ 22, 1993

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուաշինկթըն Տի. Սի.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք համայնքի Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 3, 1993 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքի Տարեկան Անդամական Ժողովը գումարում է 1993 Փետրուար 6, 7 եւ 20 օրերուն, եւ այդ առթիւ ընդրում են Ծխական Խորհուրդին հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը-

Ալպրթ Քին
Մուրատ Մուրատեան
Յակոբ Սաֆաքեան
Օճնիկ Սիվազլեան
Պէք Ան Թիթիւնճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է ըլլայ երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքի անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգևէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ